

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿՐ ՆՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՍԵՆ ՉՈՐԵՔԵՄԲԵՐԻ ԵՒ ՇԱՐԱՐ

Rev. Pere G. Kalemkarian Meechitaristengasi
Nº 4 Vient

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ներկայ 1898 թվականի
Պուշկարիյ համար տարեկան 12 ֆրանկ
» » վեցամսեայ 6 »
Արտատպանի » տարեկան 14 »
» » վեցամսեայ 7 »
ԿԱՆՆԻՒՆ ՎՃԱՐԵԼԻ

Նամակ դրամ եռայլն, դրկն ձեռնեայ հասցեով
ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐՆԱ (ՊՈՒԼԿԱՐԻԱ)
Редакция на вѣстникъ Редаction du journal
„Ирѣвункъ“ „Iravounk“
ВАРНА (България). VARNA (Bulgarie)

Խմբագրութեան ուղղեայ գրութիւն
էս յեն դրկուիր եւ յարմար դասուած-
ները միայն կը հրատարակուին անդո-
շովին կամ մասամբ:
Խմբագրութեան տար 20 տարեկան երե-
քեկ տարի անգամներու համար 20 0/0
զեղջ կը լինի, փոխարեւն կանխիկ:

ԼՈՒՍԱՌՈՐԶԱԿԱՆ ԿՂԵՐ ԻՆ

ԲՈՂՈՔԱԿԱՆ ՊԱՏՈՒՆԼԻՆԵՐ

Ամենքս ալ հասկցած ենք, թէ սա մեր լուսաւորչական եկեղեցա-
կաններուն մէջ կը պակսին առ-
հասարակ մտքի ու սրտի տէր քա-
րոզիներ որոնք կարող ըլլան ի-
րենց ժողովուրդին ճանչցնելու ո-
րուան ապրուած կեանքը, և քա-
ջութիւն ունենան ստույգ խա-
տառակելու, ամեն կեղծիք տրու-
ելով ոչնչացնելու: Ընդունուած
ճշմարտութիւն մըն է, թէ մեր
եկեղեցականները՝ իրենց ստուա-
րագոյն մեծամասնութեամբ, մեզ-
լուսած նախապաշարունակներու մէջ
լծացած մնացած են և աւանդա-
կան փոտած կարծիքներու մէջ
խարխափելով միայն կըսպանեն
իրենց անգործ ու զուռանցիտ ո-
րերը, զորս պարտաւոր էին, խե-
լացի գործունէութեամբ, օգտա-
կար ընծայել հասարակութեան:

Կնունք ընել, հարս ու փայտ
պատկել, մեռել թաղել, 10-20
փարայ ձեռք ձգել. ահաւասիկ
մեր կղերին գերագոյն իտեպը, և
անոր գործունէութեան ամփոփ
սահմանը: Որքան ալ երկիր վե-
րադառնալու վրայ ըլլան շատեր,
տակաւին կրնանք ըսել, թէ Պուլ-
կարիան, մասնաւորապէս, դեռ
եւս կարեւոր կեդրոն մըն է հայ
գաղթականութեան, որուն վիճակը
ամենեւին նախանձելի չէ: Հիւան-
դութիւն, աղքատութիւն, վճա-
տութիւն կը վիտան ամեն կողմ
և դարման մը մտածելու մէջ էն
անտարբեր դասակարգը կղերին է:
Ղեւտացիներու այդ օրհնեայ ձա-
ռանգորդները իրենց անձէն ու-
կաշիէն դուրս բան մը չունին
արդեօք մտածելու հիմայ՝ երբ
100աւոր հայեր՝ սուրին ու կրա-
կին բերնէն հալածական, օտար
աստղի տակ շուարած, կեցիք են
այնպէս:

Երբ աւելի յարմար առիթ գոր-
ծելու քան հիմայ՝ ուր յուսահա-
տութիւնը, ազգային բարոյակա-
կի այդ միակ սպանիչը, օձի մը
պաղուծեամբ, հայ սրտերու մէջ
իր մահացու թոյնը կուզէ նետել:

Վարկեան մը մեկդի թողունք
մեր համարութիւնը, աչքերնիս
բանաճ միայն, և ահա դժբաղդ-
կացութիւնը մեր առջեւ տնկուած
պիտի գտնենք՝ իր բովանդակ ար-
հաւիրքով:

Վերքեր կան հիմայ, խոցո՞ղ,
հայու վերքեր, որ կաղզուրիչ ըս-
պեղանի մը կուզեն, տաք մի-
թաւանքի մը կը կարօտին, ե-
ռանդներ կան ծայրայիւրէն
գրգռուած, զորոս սանձահարկ
հարկ է. լքեալներ կան զոր պէտք
է խանդավառել, և վերջապէս ա-
մենէն գերագոյն գործը կայ, նը-
ւիրական գործ մը զոր ամենեւին
մոռնալու չենք ու ջանալու ենք
որ յեղափոխական ոգին յաղթա-
նակէ միշտ հայերուս արեւելուայ
կուրծքին տակ:

Սա կենսական գործերու ընդ-
արձակ ասպարէզին վրայ ո՞վ կը
տեսնէ արդեօք կղեր մը, մէկ հատ
մը գտնէ՝ ի՞նչ կընեն անոնք, երբ
մեր աչքին առջեւ շատ մը հայ
ընտանիքներ անսուղ կը տառա-
պին և ուրիշ բան չունին այսօր,
բայց միայն երկու աչքեր իրենց
անհանդուրժելի թշուառութիւնը
ողբալու: Ի՞նչ կընեն երբ այսօր
ինչպէս կը խօսուի, մէկէ աւելի
հայ կիներ՝ միմիայն նիւթական
դժնդակ չքաւորութեան պատճա-
ռով՝ իրենց կաշին վաճառքի հա-
նելու լպիւր հարկին տակ կը կար-
միրն ու կուլան:

Ի՞նչ կընեն, ի՞նչ կը խորհին
երբ մանրիկ հայ լաճեր՝ զրկուած
կրթութենէ, հտպիտութեան բո-
լոր ձեւերուն անձնատուր, փողո-
ցէ փողոց չարաճճի կալօրօշներու
թափօր մը կը կազմեն, բարոյա-
պէս կ'ապականուին, մտաւորա-
պէս կըսասկին բոլորովին...
Այս հարցումներուս դէմ, ապա-
հալաբար, ամեն մարդու պատաս-
խանք մէկ բառ է միայն:
— Ոչինչ, միշտ ոչինչ:

Կռիւ կա՞յ, իրարանցում կա՞յ, ա-
նոր մէջ են սովորաբար մեր տէր-
տէրներն ու վարդապետները: Ու-
րիշ տեղ մատերնին մոխիրը չն
թաթխի, ինչպէս կըսուի ռուսկո
րէն:

Հապա բողոքական պատուելի-

նե՛րը: Յանցանք մը բրած կըլ-
լա՞նք արդեօք, եթէ զանոնք ալ
մերիններուն չրովը լուանք: — Ի-
րենց գործերը թող պատասխան
տան մեզի:

Քանի մը անգամ առիթ ունե-
ցայ ժողովարան երթալու: Չղջա-
ցի՝ Նոյն բնաբեր խօսքերը, մի
և նոյն անկապ ու վերացական գա-
ղափարները: Գո՞նէ հոգ կապաւնի
որ քիչ մը դրական ըլլային մեր
երեսները. քիչ մը ժողովուրդին
կսանքէն, անոր սրտին մօտիկ նիւ-
թերու վրայ խօսէին, և իբրեւ հա-
սարակութեան մը միտքն ու հո-
գին զսկաւարելու կոչուած առա-
քաւներ, քիչ մը ջանք ընէին ժո-
ղովուրդին բարոյականը շինող,
կրթիչ խրատներ տալու: Երբէ՞ք:

«Մենք մեղաւոր ենք, մենք չար
ենք», այս յաւիտենական յան-
կարգն է որ կղերական—հոգեւոր-
քր մ.ա. լուրջ տրուածեամբ դաշ-
նաւորուած, պա՛ղ, պա՛ղ կը հնչէ
ակաւջիւղ ու կը վերաւորէ ալ զայն:
Հոգի, հոգի, դարձեալ հոգի:
Մարմինը, իրական կեանքը,
հայրս իբր, աշխարհը ամենեւին
տեղ չեն բռներ իրենց այն օղա-
յին խօսքերուն մէջ, որոնք՝ պէտք
է անկեղծօրէն ըսել, ուրիշ բանի
չեն ծառայիր եթէ ոչ՝ արդէն իսկ
չփութած հայերը մեղկացնելու և
ստրկական դարեւոր ոգին անոնց
մէջ խորարմատ տարածելու:

Օր մը չլսեցինք որ ժողովուր-
դին մէջ ազատութեան սէրը վառ
պահող, անաչառ քննադատութեան
ոգին զարգացնող, և հայութիւնը
ճշմարիտ ինքնաճանաչութեան ա-
ռաջնորդող բարոյ մը տային:

Կը մոռնան մեր հոգեւոր հո-
վիւնները, թէ անգառնալի կերպով
անցած են այն բարի օրերը ուր
ազգերն ու ժողովուրդները՝ կղերին
չրթունքէն կախուած, հանդերձ-
եալ կեանքը միայն կը մտածէին
և անպայման համբերութեամբ կը
հանդուրժէին ամեն կեղծիքովի
ամեն բռնութեան՝ լռեցնելով ի-
րենց մէջ կեանքը վայելելու, ա-
զատ ապրելու ամեն իրիչ:

Քրիստոնէութեան մեր օծեալ
ներկայացուցիչները՝ տխու՛ր, շատ
տխուր հեգնութեամբ, Գողգոթա-

յի արիւնոտ մարդուն անուշ և
վսեմ պատկերին մօտիկը, իրենց
հարստահարեալ, վտարանդի հօ-
տին աչքերը կուզեն տակաւին
փակուած պահել և կլկեցել, թէ
խեղճ հայութիւնը իր ժողացեալ
մեղքերուն համար կը տանջուի...
Ո՛վք, սա պառաւորութիւն հոտող
խօսքերը...

Բարի՛ հովիւներ, ձեր երազա-
կան կեանքի եթեքանձմ ոլորտնե-
րէն վար, բլիկ մը վար իջէք, և
երկնային արքայութեան հետ,
բլի մըն ալ գտնէ դէպի Աղբը,
որուն վերքերն ու սրտմաշուք ցա-
ւերը կուզէք դուք օրօրել ձեր
թմրեցուցիչ, օսմաներէն քարոզ-
ներով:

Մեծ բան մը չենք պահանջեր
ձեզմէ: Քիչ մը կեանք, քիչ մը
սիրտ չէ՞ք կրնար դնել... գտնէ
ձեր խօսքերուն մէջ:

Շահրիման

ԱԶԱՐԵԱՆ ՍՐԲԱԶԱՆԻ ՄԷԿ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

(Շար. նախ. քիւնե եւ վերջ)

Կաթոլիկներու կողմէն Լուսաւորչա-
կան Հայերուն տրուած օգնութիւնը եւ
Դրան կողմէն Պատրիարքարանի եւ ա-
ռաջնորդներուն բռնած օրինաւոր ուղ-
ղութեան տրուած հաւանութիւնը լու-
սաւորչականներու վստահութիւնը գրա-
ւեցին դէպ կաթոլիկութիւնը: Անոնցմէ
շատեր կաթոլիկութեան յարեցան եւ
այս հակումը առատ հունձք կը խոստա-
նայ ապագային մէջ:

Տեղեկագիրը կը վերջանայ գանգա-
տով մը այն հրապարակագիրներուն
դէմ, որոնք կոտորածներու վրայ գրած
ժամանակ սխալ տեղեկութիւններ հրա-
տարակած եւ մանաւանդ քննադատած
են հայ կաթոլիկ պատրիարքարանի
բռնած դիրքը եւ ընթացքը հայկական
խնդրոյն հանդէպ: Տ. Վիթթօն Պէրնար
այս հրապարակագիրներէն մին է, որուն
սխալ կարծիքները եւ տեսութիւնները
Ս. Ազարեան չուզեր մատնանիլ ընել,
այլ կը բաւականանայ ըսելով թէ նա-
ւաւոր հրապարակագիրը անուշտ գրած
է հաւատ ընծայելով այն տաքցուիտե-
րէն մէկին որոնք իրենց դժբախտ ազ-
գակիցները ցնորական յոյսերով խաբե-
ցին եւ որոնք այսօր ազգին մեծամաս-
նութեան ատելութեան առարկայ են:
Տ. Պէրնար այս կերպով անուշտ, սը-
խալ եւ երեւակայական տեղեկութեանց

Հնորհիւ սա կտրծիքը ունեցած է թէ Սահմանադրութիւնը հայ ազգին վերածնունդի համար ապահովեցաւ եղած է, մինչդեռ ազգին ամենէն իմաստուն եւ ողջամիտ մասը եւ նոյն իսկ Կ. Պոլսոյ զեպականները երկար ժամանակէ ի վեր նշմարած եւ հաստատած են եղեր թէ այդ կանխահաւ գործը (Սահմանադրութիւնը) քիչ նպաստած չէ ժողովուրդին ազգ. զգացումները յոռեսերելու, զըզրոցական կրթութիւնը հարեւանցի եւ թեթեւ ընելու, պատրիարքարանի իշխանութիւնը տկարացնելու, եւ վերջապէս դուռ բանալու թշնամութեանց, անհամաձայնութեանց եւ այն վստահաւոր եւ ցնորակաւ փափայնեալուն, որոնք մէկ սխալէ միւսը առաջնորդելէ ետք՝ վերջապէս յանգեցան այն ստեղծարարական գործը թափեցան հայութեան վրայ:

Հայ ազգին միեւնոյն ողջամիտ եւ իմաստուն մասը՝ տխուր փորձառութիւնէ մը խրատուած, այսօր համոզում գոյացուցած է թէ կաթոլիկ Հայերու պատրիարքարանի բռնած օրինաւոր եւ ուղիղ դիրքը հանդէպ կայսերական կառավարութեան, հանդէպ ազգին եւ քաղաքակիրթ Արեւմուտքի, միակ բանաւոր դիրքն էր: Ս. Ազարեան անվերջ պահած է միշտ այս դիրքը առանց կարեւորութիւն տալու անփորձ եւ Արեւելքի գործերուն անտեղեակ մարդոց թեւադրութիւններուն եւ տաք գլուխ ու անխորհուրդ անհասկնալի սպանալիքներուն: Ու տեղեկագրին Ս. Հեղինակը եւ իրեն հետ հայ ազգին ճշմարիտ բարեկամները համոզուած են որ այդ է ազգին համար փրկութեան միակ մարտն:

Բնաւ զարմանք չի կրնար պատճառել որ այսքան պահպանողական ուղիղութիւն մը քարոզէ կաթոլիկ Հայոց հոգեւոր պետը, որուն սկզբունքները եւ ինչ ինչ գործերը արդէն հանրածանոթ են: Կը հասկնանք որ Ն. Սրբազանութիւնը մինչեւ իսկ այնքան յառաջ երթալ եւ ըսէ թէ իր բռնած ուղիղ (կը նշանակէ՝ Դրան հաւատարիմ) ընթացքը փրկութեան միակ մարտն է ազգին հաւատ:

Սակայն ինչ որ զարմանք եւ դայրոյթ կրնայ պատճառել, սա է թէ Ս. Ազարեան իր մէկ դատողութեան մէջ՝

ԶՈՀՈՒՍԺ ԶԵՌՔԸ

(Թարգմանութիւն պոլիգրաֆիկէն)
(2)

— Զեր վրայ բռնութիւն բանեցնելու փորձութիւն չունիմ —, ըսաւ անժանցիմ հանդարտ ձայնով մը, միեւնոյն ժամանակ ձեռքը անոր ուսին դրնելով: — Բայց ըսաւ երբէք չէի սպասէր որ Տօթթօն Ս. որուն պաղարիւնութիւնը եւ հաստատամտութիւնը ամենուն զարմանք ազգած է, ինչպէս նաեւ իր արժանիքը, կարեւոր իր ընկերին փոքրիկ մէկ զգուշութենէն կասկածներու երթալ, երբ իրեն կ'ըստի թէ՝ — Եկէք, Զեր ներկայութիւնը անհրաժեշտ է հոն, ուր կը տանիմ ձեզի: — Զեր ընկեր ծառայութիւնը մեծ է եւ միեւնոյն համեմատութեամբ ալ պիտի վարձատրուիք. եթէ կը կարծէք թէ վտանգի մէջ էք, անմիջապէս հրաման տամ որ կառքը դարձնեն եւ տանին ձեզի հոն, ուսկից առնալ: —

Օտարականին, խօսուածքն եւ ըստ իր շարժումներէն որ թէպէտեւ որսորդի հագուստ կը կրէր միայն աչքի պատրանք մը ըլլալու համար, կը հասկըցուէր որ ինքը աւելի ծանօթութիւն

պապին աւելի պապական կ'երեւայ եւ թուրք կառավարութեան ալ առաջ կ'անցնի իր թրքասէր պահպանողականութեան մէջ: Արդարեւ մինչ թուրք կառավարութիւնը կոտորածներու պատասխանատուութիւնը հայ յեղափոխականներու վրայ ձգել կը ջանայ, Ս. Ազարեան այդ բաւական չի սեպեր, չարքին բուն արմատը աւելի հեռու տեղեր կը փնտռէ, բուն յանցանքը Սահմանադրութեան վրայ կը ձգէ, Սահմանադրութեան՝ զոր թուրք կառավարութիւնը հաստատած ու վաւերացուցած է եւ որ մինչեւ այսօր իսկ, Սուլթան Համիտի օրով, իր օրինական գոյութիւնը կը պահէ:

Ս. Ազարեան անուղղակի կերպով կը պահանջէ ուրեմն որ ոչ միայն յեղափոխութիւնը, այլ եւ ամեն յառաջդիմական շարժում դադար, Սահմանադրութիւնը վերնէի ժամանակներուն ուր տակաւին Օտոման եւ Ռուսիան, Պաշեան եւ Սերմիշէն երեւան չէին եկած Ամիրայականութիւնը տապալելով՝ ազգային վարչութեանց համար կազմական օրինակները մը յօրինելու:

Մենք կը կարծենք թէ Դուռն իսկ այսքան ցնորական փափաքներ չի կըրնար տաճիլ, գիտնալով որ անկարելի է անոնց իրազեկութեամբ: Սակայն կաթոլիկ Հայոց Պատրիարքը կ'երեւայ թէ իր ժամանակէն դուրս կ'ապրի ու անկարող է դարձնել տեսնելու թէ իր ժամանակին հոսանքին առջեւ ամէն ընդդիմութիւն անգործ եւ անօգուտ է, թէ ան խօսք չի հասկնար եւ ամէն ինչ իր հետ կը քշէ ու կը տանի, մինչեւ իսկ Պատրիարքները:

ԳԻՏՈՒԹԵԱՆ ՊԵՏՔԸ ՄԵՐ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՆ ՄԷՋ

Յայտնի է թէ մանուկներու կրթութիւնը որպէսզի ապարդիւն եւ նոյնիսկ վնասակար չլինի, պէտք է համապատասխանէ անոնց ընկերական վիճակին, երկրի եւ միջավայրի պահանջներուն: Թուրքիոյ եւ Պոլսոյ մէջ մեր վարժարանները յաճախող աշակերտներու

ունի երիտասարդ բնույթը վրայ, որքան այս վերջինը անոր վրայ: Տօթթօնը բնութեամբ վախկոտ մէկը չէր, ընդհակառակը ամեն բանի պատրաստ էր, մինչեւ անգամ հակառակ իր համարձակութեան ամեն բանի յանձնառու կ'ըլլար, մինչդեռ ուրիշ պարագաներու մէջ աւելի լրջօրէն մտածելով որոշում կուտար: Ասոր համար բացէ ի բաց ըսաւ կարծեցեալ որսորդին թէ, ինքը վախը ինչ է չը գիտեր եւ իրեն հետ պիտի երթայ: Բայց երբ օտարական պահանջեց իրմէ որ երգնու իր ամբողջ կեանքին մէջ կատարեալ լուծութիւն պահելու բոլոր այն բաներուն վրայ զոր պիտի տեսնայ այս գիշեր, հոս երիտասարդ բնույթը իր պատուասիրութիւնը վերաւորուած զգալով վճռական կերպով պատասխանեց որ, եթէ իր խօսքը անբաւական կը նկատէ, թո՛ղ մերժէ նաեւ իր ճարտարութիւնն ալ: Օտարականը տեսնալով թէ խօսակցութիւնը ուր կ'երթայ թողուց այս խնդիրը:

Կառքը խոր լուծեամբ շարունակեց իր ընթացքը որ տարիի մը չափ եկաւ Տօթթօնին, մինչդեռ ամբողջ ժամ մը անցած չէր տակաւին. վերջապէս կառքը դրան մը առջեւ կենալով, դուռները բացուեցան եւ օտարականը խնդրեց Տօթթօնին որ իջնայ: Այս վերջինը

եթէ ոչ ամբողջութիւնը գէթ մեծամասնութիւնը երկրագործ առեւտրական եւ արհեստաւոր ժողովուրդի մը զաւակներն են. անոնք կուշուած են իրենց հայրերու այդ աշխատութիւններով պարապիլ, սա տարբերութեամբ որ իրենց նախորդներէն աւելի համոզեալ եւ աւելի կատարեալագործուած միջոցներով պիտի գործեն, որպէս զի կարենան դիմանալ հետզհետէ սաստկացող մրցման: Արդ՝ որովհետեւ վարժարանի մը պաշտօնը տղաքը կեանքի պատրաստելն է, ուստի հոն աշակերտին պէտք է տալ ուրիշ զգացումներու եւ սովորութիւններու հետ այն նախնական ծանօթութիւնները, պէտք է ներշնչել այն արհեստներու սէրն ու ճաշակը, որոնք ապագային պէտք պիտի ըլլան անոնց, վայ այն ժողովրդին որ գիտութիւններու արագաբայլ զարգացման համընթաց չյառաջադիմք որպէս զի իր արհեստները նոյն համեմատութեամբ կատարելագործէ, այնպիսին դատարարութեան մրցման մէջ ընկճելու, տնտեսապէս եւ բարոյապէս կորսուելու:

Այս անողորմ եւ ամեն ժողովրդի համար անփոփոխ օրէնքի գիտակցութիւնը ունեցող եւ ո՛ր համեմատ շարժող քանի՞ ուսուցիչ եւ հոգաբարձու ունինք. ո՞վ կրցած է նկատել եթէ ճիշդ այդ օրէնքի հետեւնեքները արդէն կը դադարուն մեր ազգի վրայ, թէ հայ ժողովուրդը հետզհետէ կաղքատանալ եւ կայլասեալ, հայ վաճառականները կը նուազին, հայ արհեստաւորներն եւրոպական մրցման չեն դիմանար եւ անգործ կը մնան, հայ գիւղացիներն իրենց ընդարձակ հողերէն, շնորհիւ նախնական միջոցներու, ուտելիք հացիւնին ալ չեն կրնար ճարել եւ պանդխտութեան կը դիմեն: Այս վերջի տա-

վար իջնելու ժամանակ չորս կողմը կը գիտէր, որպէսզի գէթ եկած տեղը կարենայ յիշել: Բայց խոր մթնութիւնը ինչպէս նաեւ ընկերը որ գրեթէ հրեով բաց դուռնէն ժամ առաջ ներս մտնելու կ'աճապարէր, արեւը եղան իր փափաքին: Օտարականը զայն սանդուղներէն վեր սենեակ մը տարաւ ու ինքը դուրս ելաւ:

— Տօթթօնը ինքզինքը առանձին գտաւ, արեւելեան ճաշակով զարդարուած սենեակի մը մէջ, բայց շատ քիչ վայրկեաններ ունէր սենեակը դուռելու, որովհետեւ քիչ մը ետքը՝ քովի սենեակէն պզտիկ դուռ մը բացուելով երիտասարդ մը ներս մտաւ, սեւահեր, սեւամօրուս եւ գրեթէ սեւի վրայ աչքերով: Իր ընտիր ու գեղեցիկ հագուստը եւ մանաւանդ կեցուածքը ու շարժումը կը ցուցնէին թէ հասարակ դասակարգէ մէկը չէ, այլ թէ բարձր ընտանիքի մը կը վերաբերի:

Որսորդը Տօթթօնին հետ ֆեռասիւրէն կը խօսէր, բայց այս երիտասարդը որուն խօսուածքին մէջ օտար չեղտեր կը նշմարուէին, յստակ գիտմաներէն կը խօսէր անոր հետ:

— Դուք, ըսաւ, ինձ եւ ուրիշի մը ամենամեծ ծառայութիւն մը պիտի ընէք, պարոն բժիշկ — մեծ ձանձրոյթ տուի ձեզ հոս բերել տալով, որպէս զի

րիներու քաղաքական պատճառներէ առաջ, տնտեսական պայմաններու ստիպման տակ արդէն հայ ժողովուրդը սկսեւ էր ցրուիլ աշխարհի չորս կողմերը, հոն զգաւորով, բարքով եւ բնաւորութեամբ այլասեւելու, օտարաշու կորսուելու համար: Իրերու այս վիճակին մէջ՝ այդ բոլոր շարեաց առաջը մասամբ առնելու եւ նոյն իսկ վարժարանները իրենց բուն նպատակին ծառայեցնելու համար անհրաժեշտ է մեր տղոց գիտական եւ արհեստավարժական կրթութիւն մը տալ: Բաւական է որքան դասական կրթութեամբ սերունդներ պատրաստեցինք որոնք իրենց ապրած ժամանակին ու միջավայրին համար շատ փափկացած, շատ օտարացած են. բաւական է որքան հին պատմութիւններու ներշնչած զգացումներով արեւելու, աւանդութիւններով կուրացած երիտասարդութիւններ ունեցանք, որոնք՝ ներկայի պէտքերուն եւ ձգտումներուն անգիտակ, մրցման ուժին դիմանալու անկարող են: Այս առնիքն է որ գիտական ճշմարիտ կրթութեամբ մը մեր տղայքը առողջ դատողութեան, ազնիւ զգացումներու եւ կորովի կամքի տէր անհատներ ընենք: Գիտութիւնն է որ նիւթական բալիքները մեզ կընձեռնէ, մեր կեանքը կ'ապահովէ եւ մեզ բարեկեցութեան մէջ պահելով շատ մը անբարոյականութիւններէ կը հեռացնէ: Գիտութիւնն է որ յիշողութիւն եւ մտքի ուրիշ կարողութիւնները գերազանցապէս կը զարգացնէ, նա է որ առարկաներու էականութեան եւ երեւոյթներու յարաբերութեանց ուսումը ըլլալով՝ մեր դատողութիւնը կը հասունցնէ, իր յաւիտենական եւ անփոփոխ օրէնքներու ազդեցութեան տակ մեր կամքը կը զօրացնէ, մեզ համար:

Փոքրիկ անդամահատութիւն մը կատարէք:

— Շատ կը ցաւիմ, պատասխանեց Տօթթօնը, որովհետեւ ձեզ ծառայելու ամենեւին պատրաստութիւն չունիմ — Զեր սպասուորը Տիրէթթօր Պարրասի պարահանդէսէն կանչեց զիս, առանց ինձի իմացնելու թէ ինչ տեսակ ծառայութիւն էր որ ինձմէ կ'սպասուէր, ըսաւ եւ ոչ մէկ գործիք ունիմ:

— Այդ մասին, ամեն բան պատրաստ է —, պատասխանեց մեղմօրէն շնորհագիւ անձը, զոր Տօթթօնը կամ Ռուս եւ կամ Բօլսեղ մը կը կարծէր: Այս ըսելով մէկ կողմ քաշեց դաշտայն ծածկոցը, եւ Տօթթօնը մեծ զարմանքով տեսաւ պզտիկ սեղանի մը վրայ իր բոլոր վերաբուժական գործիքներ նոյնութեամբ հոն դրուած:

— Ներհեցէ համարձակութեանս, — շարունակեց օտարականը, — բայց կարծեմ, պարոն բժիշկ, դուք աւելի լաւ պիտի կատարէք անդամահատութիւնը եթէ բուն իսկ ձեր անձնական գործիքները գործածէք: Թոյլ տուէք հիմա ներկայացնեմ ձեզ խեղճ տառապեալը:

Ու մեղմով հրեով յարակից սենեակէն պզտիկ դուռ մը բացուեցաւ, զոր Տօթթօնը մինչեւ այն ատեն ամենեւին չէր նշմարած եւ գլխովը նշան ըրաւ երս մտնալու:

ձակ, անկախ և մեր ուժին հա-
ւատարմութիւն կընէ, վերջապէս մեր
նկարագիրը կը կազմէ: Գիտու-
թիւնն է զարմեալ որ մեզ բա-
նաստեղծական անհուն զգացում
ներ կը ներշնչէ, սրտին յաւիտե-
նականի և անասնականի սարսուռը
կազդէ, ամենաշնչին առարկան իսկ
գիտական գեղեցիկ և զարմանալի
օրէնքներու, անցեալ՝ անակիւր և
ապագայ՝ յաւիտենական կեանքի
մը գաղափարը կուտայ մեզ ու մեր
սիրտը կաշնուեցնէ, և եթէ կու-
զէք, գիտութիւնն է որ ճանաչե-
լին անճանաչելիէն կորոշէ և այդ
պիսով զայն մեզ աւելի լաւ ըմ-
բռնելի, հաւատարմ կընէ:

(Շարունակելի)

Պ.

ԳՍՐԱԿԻՑՁԵԱՆ ԿՏԱԿՐ

ՇԵՐԻԻ ԴԱՏԱՐԱՆԻՆ ԱՌՋԵՒ

Ինչպէս արդէն ծանուցուեցաւ
Շէյխ-Իւլ-Իսլամ էֆ. Սեւտիս էֆ.
Սուրէնեանի ազերսագիրը ձեռնարկ
ըրած էր Բումէլիի Գաղափար-
թեան Առեւտրի ի քննութիւն և ի
տեղեկագրութիւն, նախ քան դա-
տաւարութեան սկսիլը: Հետեա-
պէս անցեալ շաբաթ օր նոյն ա-
տենին Վոլոդէ բերանացի հրաւերի
մը վրայ, Գրիգոր էֆ. Գարապէտ-
եան ներկայացաւ Բումէլիի Գա-
ղափարը քաղաքավարութեամբ
բացատրեց Սուրէնեան էֆ. ի ա-
զերսագիրին իմաստը, և Շէյխ-Իւլ-
Իսլամ էֆ. ին յանձնարարութիւնն
առնոյն Ատեանն, և Տիգրան Գա-
րապէտեանի կտակին ի նշ ըլլա-
լուն վրայօք, կարգ մը տեղեկա-
թիւններ խնդրեց: Գրիգոր էֆ.
խոստացաւ թէ օր բերիլ պէտք
եղած տեղեկութիւնները, իսկ
որովհետեւ Գրիգոր էֆ. ո՛ր և է պատ-
ճառաւ ներկայ չէր կրցած գտնուիլ:

Երիտասարդ Տօթէօնը, մինչեւ այն
վայրկեանին կը մտածէր ու կըսէր մը-
տովի թէ, թերեւս մենամարտութիւն
մը տեղի ունեցած ըլլայ այս տեղ, որմէ
պատճառով մէկ դժբաղդութեան համար
օգնութեան կանչած են զինքը, այ-
սինքն, անդամահատութիւն մը կատա-
րելու: Բայց երբ «խեղճ տառապեալ»
բառերը լսեց, սարսեցաւ, կամ աւելի
վախցաւ ալ, թէ արդեօք ինչ տեսա-
րան պիտի պարզուէր իր աչաց առջեւ:
Դաշխիթի մը մէջ, անանկ չքեղապէս
զարդարուած էր որ, իրաւամբ կը յի-
շեցնէր Շէհէրզադէի առապելական
պատմութիւնները: Բազմոցի մը վրայ
ընկողմանած էր գեղեցիկ բեհիզայ
կերպասներ հագած կին մը, գերազանց
գեղեցկութեամբ: Իր նայուածքէն կ'ի-
մացուէր թէ առջի գեղեցկութիւնը
չունէր, տարիքը քսանեւէինգ կամ քը-
սանեւէինգէն վեր չէր: Բայց մարդ չէր
կրնար երեւակայել թէ ինքը տակաւին
իր գեղեցկութեան գագաթնակէտը կը
գտնուի: Սեւ եւ երկաթն մազերով ծած-
կուած երեսը՝ որուն մաքրութիւնը ե-
զական էր, չունէր այն զուարթ և
ընական ժպիտը, որ կը պատահի տա-
նեւէինգ կամ տասնեւեօթը տարեկան
աղջիկներու աչաց եւ չրթունքներուն
վրայ, հիմա իր այս կացութեան մէջ
այնպէս պէտք էր որ աչքերը խորխոր

Սուրէնեան էֆ. իմացեր է նոյն
Ատեանէն թէ Գրիգոր էֆ. Եշ. օր
պաշտօնապէս պիտի «հրաւիրուի»
ներկայանալու: Եթէ նորէն չգայ,
պիտի «կոչուի» ի դատարան: Եթէ
գարձեալ չգայ, ի բացակայութեան
պիտի նայուի դատին, Շէրիի դա-
տաւարութեան օրինաց կատարեալ
գործադրութեամբ:

ԼՐԱՔԱՂ

Եղեալայէն գրուած նամակէ մը կը
քաղենք հետեւեալը:

— Գերմանացի մարզապետներու որ-
բախում գործն երթալով կը չեշտուի
այս կողմերը: Անոնցմէ զատ՝ որք նո-
րէն պիտի առնուին տեղոյս Որբանոց-
ներուն համար, Գերմանք Տիարպէթիւրի
մէջ այս անգամ կը հաստատեն Որբա-
խումի նոր ծիւղ մը: Տեղոյս հաստա-
տութեան վարիչներէն Մ. Էքարթ մօ-
տերս Տիարպէթիւր երթալով 50 որբ ու
50 որբուհի հաւաքապարտուեց ու հոս
վերադարձաւ: Կ'ըսուի թէ քաղաքին
աւելի Տիարպէթիւրի գիւղաբնակ հայե-
րու մէջէն է որ կրցած է քիչ օրէն
«տրամադրելի» ընել այդչափ որբ ու
որբուհի:

— Բիւզանդիոն կը գրէ:

Խարբիդէ գանդաւաններ կը հասնին
թէ Ամիրիկա պահպանող եւ վերադար-
ձող ազգայինք իրենց կիները թողնով
կրկնամուսնութեան կը դիմեն: Լըք-
ուած կիներ կը պահանջեն կամ իրենց
ամուսիններն եւ կամ ուրիշին հետ ա-
մուսնանալու արտօնութիւն: Հակառակ
պարագայի մէջ կ'սպառնան ուրիշ մի-
ջոցներու դիմել: Տեղոյս կրօնական
իշխանութիւնք անգոր եղած են այս
վիճակին դարման տանելու:

— Կ. Պօլսոյ Կրօն. Ժողովը անցեալ ե-
րեքշաբթի առաւ նոսրին մէջ որոշեց
է յանձնարարել Ռուսոնքի Պօլսոնեան Տ.
Կարապետ հօր որ Պուլկարիոյ Հայոց
եկեղեցիները պաշտօնավարող քահա-
նայից մէկ ցուցակը ներկայէ, յիշելով
իւրաքանչիւրին արժանիքը, ծառայու-
թիւնը, եւ այլն:

— Երօն. Ժողովը Առաջնորդներուն եւ

ըլլային եւ աշխարհային կեանքէն զըզ-
ուած, իր գիղանի հասակը ալ պէտք
չէր որ ներկայանար ոչ մէկ տեղ մը,
ոչ պարսկահայեցիներու ոչ ալ ո՛ր եւ է
ընկերութեան մէջ: Կարելի չէր ուրիշ
կերպ ներկայացնել զայն, եթէ ոչ ճեր-
մակ հաղուստներ հազած, որոնք աւելի
կը բարձրացնէին իրեն գեղավայելուչ
հապակը:

Երբ պարոնները սենեակը մտան տի-
կինը ելլալով իր տեղէն յառաջացաւ
դէպի անոնց:

Տօթէօնը զլիսով խոնարհութիւն ը-
րաւ, այլ ընկերակիցը առանց ո՛ր եւ է
ներկայացման ըսաւ: — Պարոն բոխիկ,
կը տեսնաք ձեր այս խեղճ տառապեալը,
այս տիկինը կ'աղաչէ ձեզի որ իր աջ
ձեռքը կտրէք:

Եւ այս ըսելով, բռնեց այն փափուկ
ձեռքը ոչ ուն վրայ սքանչելի աղամանդ-
եայ մատանի մը կը չողար եւ տուաւ
Տօթէօնին:

— Այս ձեռքը կտրե՛մ, բացառանչեց
Տօթէօնը սարսուռով: — Եարձեւ կա-
տարեալայէս առողջ է: Առաւ ձեռքը
յիւնիսն մէջ եւ երկարօրէն քննելէ յե-
տոյ, մէկ ակնարկով հաստատեց իր
առջի խօսքերը: — Կատարեալապէս ա-
ռողջ է:

Թ. Գ. Հիմողեան

(Շարունակելի)

Վանահայր եպիսկոպոսներուն յանձնա-
րարեց որ առանց կեղծ. Կրօն. Ժողով-
քին հարցնելու ծայրագոյն վարդապետ
եւ կուսակրօն սարկաւազ չի ձեռնա-
դրեն: (Գի այս վերջինք անմիջապէս
վարդապետ ըլլալ կուզեն եւ ծայրագոյն
իշխանութիւնն ալ չուտ կարծնայ):

— Քարտիֆի մէջ Տ. Ճէյմըս
Պրայսի նախագահութեամբ գու-
մարուելիք անգլիական միթիինկը
տեղի ունեցած է Սեպտ. 23ին և
24ին: Միթիինկը պարզապէս մար-
դասիրական նպատակաւ գումար-
ուած լինելով, Հայերուս համա-
կրկան ճառեր խօսուած և թըշ-
ուառներուն օգնելու հրաւերներ
եղած են:

— Նոր. Գարի մէջ կը կարդանք:—
Թէոդոսիայում շուտով բացուելու
է յայտնի ծովանկար Յով. Այվա-
զազովսկու պատկերների նոր ցու-
ցահանդէս, ուր ի ցոյց կը դրուին
նաեւ լուրջովն նոր վերջին ժամա-
նակներումս նկարած պատկերներ:

— Բողոքականների եկեղեցական
դպրոցները լուսաւորութեան մի-
նիստութեանը ենթարկուելու ծը-
րագիրը պատշաճաւոր իշխանու-
թիւնից հաւանութիւն է գտել:

Տիար Յարութիւն Չաքըրեան
խմբագրութեան նամակ մը ուղ-
ղելով կը բողոքէ հրապարակաւ
Շարժումի շաբաթ օրուան թիւին
մէջ Տիար Տ. Ճգնաւորեանի բա-
ցակալութեան մասին եղած ակ-
նարկութեան դէմ: Եւ կը յայտա-
րարէ թէ Տ. Ճգնաւորեան անձ.
նական աւագ կտրեւորութիւն ու-
նեցող գործի պատճառաւ բացա-
կայ գտնուած է Սեպտ. 18 ին դա-
տաւարութեան օրը: սակայն նօ-
տարէն հաստատուած իր փոխա-
նորդ փաստաբաւ որոշեալ ժա-
մուն դատարան ներկայացած է,
ուր երկուստեք հաւանութեամբ և
դատարանի որոշմամբ դատը յե-
տաձգուած է յառաջիկայ հոկտ.
29 ին, յորում տեղի պիտի ունե-
նայ իր (Տ. Չաքըրեանի) դատու-
թաւութիւնը Շարժումի նախկին
պատասխանատու Տիար Գ. Թա-
միզեանի հետ:

Տիար Արշակ Չոպանեան կը
խնդրէ մեզմէ ծանուցանել թէ
Ռուսոնքի, Ռումանիոյ և Պարս-
կաստանի համար, իր ի յօտոյ չը-
րատարակելի Անահիտի գործուկալ
նշանակած է Տիար Գառնիկ Տէօք-
մէճեան ի Ռուսոնք:

«ԻՐԱՆԻՆՔ»-Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Կ. Է. Ի. Փ. Պօլսոյ. — Գարահիսարի
Չըրախի գիւղացի Դանիէլ Ռոճիկեան
անուն անձին Գրաւորի գիւղիցի փե-
րեղակութեամբ զրադիւն մեզ կ'իմացը-
նեն. ճշգրիտ տեղեկութիւն ստանալու
համար դիմեցէք առ Պետրոս Ֆէրմա-
տիս ի Գրաւորի (Ռումանիա):

— Վ. Մ. Ֆոզլան. — Դրամը ստա-
ցանք:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԱԶԴ

Այժմէն կը փութանք ծանուցա-
նել թէ ակամայ ստիպուած ենք
հրապարակել այն բաժանորդներու
անունները, որոնք մինչեւ հօկտ.
ամսոյ վերջը բաժնեգիրն վճարած
չըլլան ներկայ տարեշրջանի հաշ-
շոյն համար:

ԹԻԻՐԳԻԱՏՍ. ԻՍԼԱՀԱԹ

Սթանպօլ ճէրիտէլէրի իսլամա-
սէրլէվհասը իլէ աթիտէքի մալիւ-
մաթը վէրիօրլար:

Գօսօվա վալիսի Մէհմէտ բաշա
Սատրապաւա լաիհալար եօլլալուպ,
Թիւրքիանըն Էվրօթա վիլայէթլէրի
իշին պիր թագըմ իսլահաթ թէք-
լիֆ իթմիշ տիր. իշպու լաիհալար
Սթանպօլտա թէտգըգը նազար-
տան կէշիւրիմիշ վէ լաղըմ կէլէն
տաիրէյէ իհալէ օլընմըշ:

Քէզա Պապը Ալի՝ Անատօլու
վիլայէթլէրին Սէր Գումիսէրի Շա-
քիր բաշատան տախի պիր թա-
գըմ լաիհալար գապուլ իթմիշ.
Շաքիր բաշա պու լաիհալարը իլէ
վիլայէթլէրտէ Էհալինին թէմիւնը
սաատէթի (սոք) իշին պիր թագըմ
թէրթիպաթըն իհրասընը թէքլիֆ
իտէյօր իթիշ. պու թէքլիֆաթըն
պաշլըճալարը՝ մէմալիքին սանաթ
վէ թիհարէթիւնի իլէրլէթմէք վէ
սէրլէթ մէնպալարընը արթըր-
մագ իշին ումուժա ֆաիտէլի ին.
շաաթտա պուլընմագ, քէզա վի-
լայէթլէրտէ Էհալինին թալիմ ու
թէրպիյէսի իշին մէքթէպլէր աշ-
մագ վէ շէհիւրէրտէ վէ քէօյլէրտէ
հէնիտէն գապլիյէ վէ ժանտարմա
թէշքիլ իթմէք վէ օրտուի հիւմա-
յունըն մուավլէթի իլէ սիւվարի
դապլիյէ պէօլիւքլէրի թէէսիս
էյլէմէք:

Իշպու թէքլիֆաթ պիլ միւ-
թալէա պիլա թէէլիւր իհրասը ի-
շին իրատէ չըգմըշ օլտըղընտան,
պու կիւն տայիրէի մալսուա թա-
րաֆընտան թահիլը միւզաքէրէտէ
իթիշ:

Թիւրքիատա 40-45 սէնէտէն
պէրու թանդիմաթ վէ իսլահաթ
տէնիլիպտէ, ճէրիտէլէրտէ վէ
գանուն քիթապլարընտա հաղըլ-
մագտան մաատա մէմալիքին հիշ
պիր գըլթասընտա իհրասթը կէօ-
րիւմէմիշ վէ աքսի օլտրագ թա-
ղիգաթ վէ պարպարըգ կիւն պէ
կիւն արթմըշ վէ արթմագտա օլ-
տըղը թարիֆէ հաճէթ եօգ տըր:

Պու տէֆա տալի թիւրք կա-
ղէթալարըն Եըլտըղտան ալտըգ-
լարը թէնպիհաթ իւղրէ, իսլա-
հաթ ճէտվէլլէրի թէրթիպ ու
թէտգըգ օլընմագտա տըր տէյիւ
հալմալարը բէք մանասըղ տէյիւ
տիր: Չիրա Անատօլուտա վան
վիլայէթիւնտէ վէ Էվրօթա գըլթա-
սընտա Պէրանտա՝ թիւրք աքէր
վէ մէմուրլար եէտի իլէ ախիւրէն
վուգույա կէլէն խապասէթ ու վահ-

